ՊԱՏՄԱՎԵՊ ԱՐՑԱԽԻ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՄԱՍԻՆ*

Սոկրատ Խանյան

Վաստակաշատ գրող Ժաննա Հակոբյանի հետաքրքրությունը ժամանակակից հիմնախնդիրների հանդեպ չէր կարող նրա հայացքը չուղղել դեպի պատմական անցյալը: Նա լավ է հասկանում, որ առանց պատմական լավագույն ավանդույթների յուրացման հնարավոր չի լինի կառուցել օրինակելի ներկա՝ միտված ապագային: Ահա այս լուսավոր աշխարհընկալման արդյունքում ծնունդ առավ և 2007-ին տպագրվեց «Ղարաբաղի ճակատագիրը» պատմավեպը: Երկի նախաբանում Հակոբյանն ընթերցողին է ներկայացնում պատմավեպին անդրադառնալու դրդապատճառները: Մի դեպքում նա գրում է. «Ես, որպես գրող և լրագրող, տարիներ ի վեր մամուլում հանդես եմ եկել հրապարակախոսական այնպիսի հոդվածներով, ուր բազմիցս լուսաբանել եմ մեր հայրենիքի ցավերն ու հոգսերը: Ինչ խոսք, հաճախ անդրադարձել եմ ղարաբաղյան թեմային: Ուստի բնական էր, որ օրերից մի օր էլ հնարավոր էր ստեղծեի հայրենասիրական բնույթի մեծ կտավ» [1]: Մեկ այլ դեպքում նա հետևյալ կերպ է արտահայտվում. «Իմ համոզմամբ, եթե գրողն իր ստեղծագործական կյանքում երբևիցե չի անդրադառնում իր ժողովրդի պատմության էջերին, ապա նա մնայուն գործ ստեղծել չի կարող»[2]: Մեկ ուրիշ պարագայում գրողը խոստովանում է. «Անկեղծ ասած, ես ցանկացա իմ ուժերը փորձել այդ դժվարին ժանրի մեջ: Այսինքն դա նաև ինքնահաստատվելու ներքին ստեղծագործական պահանջ էր»[3]:

Սակայն ինչպես էլ գրողը բացատրեր պատմավեպին անդրադառնալու պատճառները, միևնույն է, նա հաստատ գիտակցում էր, թե ինչ ծանր պատասխանատվություն է կրում նման գործի ձեռնամուխ լինելիս: Նպատակն ամեն դեպքում մեկն էր՝ ստեղծել հայրենասիրական բնույթի գործ և իր նվիրական պարտքը կատարել ժողովրդի հանդեպ:

Հակոբյանն ունեցել է հարուստ օրինակ՝ հանձին հայ դասական պատմագրության: Նա լավ է իմացել, որ պատմավեպ գրող հեղինակը պետք է խորապես յուրացնի պատմությունը, լինի ոչ միայն պատմաբան, այլև ազգագրագետ, հոգեբան: Նա նույնպես բարձրաձայնում է այդ մասին. «Պատմավեպին անդրադառնալուց առաջ մեծապես գնահատել եմ հայ գրականության մեջ թողած պատմավիպասանների վաստակը՝ սկսած Աբովյանից մինչև Դեմիրճյան: Թե ինչքանով ինձ կհաջողվի ի մի բերել վեպում մեր անցյալի բոլոր նվաճումները, հայտնի կդառնա գիրքն ընթերցողի սեղանին դրվելուց հետո»[4]:

Վեպի պատմական անցքերը վերաբերում են Ղարաբաղի 18-րդ դարի վերջին տասը տարվա անցքերին (1787-1797թթ.), երբ Արցախը կենաց ու մահու կռիվ էր մղում պարսկական ու թուրքական բռնապետությունների դեմ: Հայտնի է, որ հայոց 18-րդ դարը դժվարանցանելի խաչմերուկների բարդույթ էր: Պատահական չէ, որ այն պատկերվել է Ռաֆֆու «Դավիթ Բեկ», Ս. Խանզադյանի «Մխիթար Սպարապետ» պատմավեպերում: Ըստ էության, Ժ. Հակոբյանը ձգտել է լրացնելու այդ երկերի շարքն այն առումով, որ ավելի կոնկրետ է ներկայացնում Ղարաբաղը՝ Հայոց Արևելից Կողմանք: Որ-

---

* Հոդվածն ընդունվել է 03.03.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնը:

պես հիմնական աղբյուրներ են ծառայել Ռաֆֆու, Լեոյի աշխատությունները: Սակայն նրա ձեռքի տակ են հայտնվել հիշյալ պատմաբանների կողմից չհայտնաբերված նյութեր: Հակոբյանն օգտվել է Մ.Յու. Ներսեսովի և Հ. Շուշեցու գրվածքներից՝ թարգմանված պարսկերենից: Նա նաև քննության է առել կոնկրետ դարաշրջանին վերաբերող նյութերը՝ օգտվելով գրադարաններից, մատենադարանի կաթողիկոսական մատյաններից, մատենագիտական հարակից ցանկերից (ռուսական, վրացական): Ուսումնասիրել է և դարաշրջանին հատուկ ազգագրական նյութերը:

Ժ. Հակոբյանի կողմից այս պատմավեպի հրապարակումը պիտի դիտվի որպես գրական սխրագործություն: Նա ծանրակշիռ մոտեցում է ցուցաբերել պատմական անցքերի ու դեպքերի հանդեպ՝ փորձելով գեղարվեստական երևակայության սահմաններում մշտապես հավատարիմ մնալ պատմական ճշմարտությանը: Գիրքն ընթերցելիս զգացվում է, որ հեղինակը ջանացել է հնարավորինս ընդգրկուն բնույթ հաղորդել Ղարաբաղի 18-րդ դարավերջի պատմությանն առնչվող նյութին: Բանաստեղծ Բոգդան Զանյանը, ընթերցելով Ժաննայի գիրքը, գրել է. «Արցախի պատմությանը խորապես իրազեկ էին անվանի գրողներ Հայկ Խաչատրյանը և Բագրատ Ուլուբաբյանը: Ես հորդորում էի նրանց, որ պատմավեպ գրեն Արցախի մասին, բայց նրանք հապաղում էին: Միայն Հայկ Խաչատրյանը պատմավեպ գրեց Վաչագան Բարեպաշտի մասին: Եվ ահա ուրուխությունս կրկնապատկվեց, երբ ձեռքս առա Ժաննա Հակոբյանի «Ղարաբաղի ճակատագիրը» պատմավեպը: Այն կարդալուց զարմացա, որ նա կարողացել է մանրամասն ուսումնասիրել 18-րդ դարի Արցախի պատմության բախտորոշ, հատկապես դրամատիկ անցքերն ու իրադարձությունները: Հակոբյանը գեղարվեստական մեծ վարպետությամբ է ներկայացնում պատերազմները, հերոսների կյանքը, նրանց սխրագործությունները»[5]: *Իսկապես, արձակագրին հաջողվել է գեղարվեստական խոր ընդհանրացման հասնել՝ արտացոլելով դարաշրջանի տիպական առանձնահատկություններն ու մարդկային բոլոր հարաբերությունները:*

Վեպն սկսվում է ձմեռային խավարի մեջ Շուշիի անառիկ բերդի պատկերով: Գրողը նշում է, որ այն ժամանակին եղել է Արևելյան Հայաստանի ամուր հենակետերից մեկը և 1752 թվականից դարձել էր «այլածին իշխանության թիկունքը Ղարաբաղում»: Հեղինակը գրում է. «Բերդ-ամրոցը վերածվեց բնակչության ստրկացման գենքի»: Հայտնի է, որ մելիք Շահնազար Երկրորդի ազգակործան քաղաքականության պատճառով Ղարաբաղը հայտնվեց ջևանշիրցի թուրք քոչվոր ցեղի առաջնորդ Փանահի, իսկ հետո նրա որդու՝ Իբրահիմ խանի ձեռքին: Ստեղծվեց Ղարաբաղի խանություն, որն հզորացավ Իբրահիմ խանի իշխանության տարիներին (1762-1806թթ.): Այսպիսով, համարյա մեկ դար (75 տարի) նրանք իրենց լծի տակ էին առել բնիկ ղարաբաղցիներին՝ թուրքերով լցնելով մեր լեռնաշխարհը: Խանի դաշնակիցներն էին մելիք Շահնազարը և Խաչենի կառավարիչը՝ մելիք Ալլահվերդին: Մնացած մելիքները դեմ էին խանին և բանակցություններ էին վարում ռուսների հետ՝ ազատվելու թուրքական լծից: Սակայն Իբրահիմ խանը խաբեությամբ իր մոտ կանչեց մելիք Մեջլումին, Մելիք Աբովին ու մելիք Բախտամին՝ կալանավորելով նրանց Շուշվա բերդում:

Վեպի գլխավոր հերոսներից է Ջրաբերդի մելիք Մեջլումը, որ երևում է գրքի առաջին էջերից՝ շղթայակապ, Շուշիի բերդում: Գրողը հոգեբանական խորությամբ է տվել նրա ծանր ապրումները: Մեջլումը մտատանջվում էր ընտանիքի, սիրած կնոջ, իր իշխանության տակ ապրող հազարավոր գյուղացիների ու զինվորների համար: Հոգեկան տառապանքներից բացի, նա նաև ֆիզիկապես էր տառապում, քանի որ դաժան կտտանքների էր ենթարկվում թշնամու կողմից: Բերդում մթության մեջ Մեջլումին հանկարծ հայտնվում է հոր ուրվականը, որը խորհուրդ է տալիս որդուն չընկճվել՝ հիշեց-

նելով նրան, որ ինքը քսան տարի պայքարել է Փանահ խանի դեմ, և որ այժմ որդու հերթն է մարտնչելու: Բավականին ցասումով է հնչում հոր պատգամը. «Դու չպիտի թողնես, որ մեր ազգը ստրկացվի: Մեր նախնիները ազատ Ղարաբաղի համար կռիվ են տվել: Մենք նույնպես գործով պիտի ապացուցենք, որ մենք քաջությամբ ու ազգասիրությամբ ոչնչով չենք զիջում նրանց: Գոտեպնդվի՛ր, որդի՛ս, դու մեծ առաքելություն ունես քո ազգի առաջ»[6]:

Այնուհետև հոր ուրվականն անհետանում է, և որդին միանգամից մոռանում է իր ցավերի մասին: Նա անհաղթահարելի ցանկություն է զգում պատժել թշնամիներին: Եվ կեսգիշերին նրա փախուստը կազմակերպում է նրա քաջ զորապետը՝ Թյուլի Արզումանը: Նա իր երկու ընկերների՝ Դալի Մահրասայի (Ավագ վարդապետի) և զարգար Մելքումի հետ մի փոքր ջոկատով հարձակվում է բերդի վրա և ազատում մելիքներին: Հրաշալի է պատկերված նրա հանդիպումն օջախում հարազատների՝ կնոջ և մոր հետ: Վեպի հուզիչ կտորներից է բերդից ազատվելուց հետո հոր՝ մելիք Հաթամի գերեզմանին այցելության պահը («Հոր շիրմաքարի առաջ»): Իր զորավարներին կարգադրեց, որ հսկեն գերեզմանի տարածքը, իսկ ինքն իջնելով ձիուց, մոտեցավ հոր շիրմաքարին՝ ծնկի գալով ասաց. «Հայրի՛կ, երախտապարտ եմ քեզ, որ իմ կյանքի ամենածանր պահին գոտեպնդեցիր ինձ քո ոգով, հիշեցրիր ինձ մեր նախնիների կանչը... Աստծո կամոք կկամենայի միշտ զինված մնալ նժույգիս վրա և անժամանակ սուրս պատյան չդնել: Հավանաբար մի քանի օրից ես էլ կմիանամ վրացիների ու ռուսների զինված ուժերին: Հայրի՛կ, քո աննկուն ոգով զորավի՛գ եղիր ինձ».:[7] Մինչ այդ մելիք Մեջլումն արդեն երկու նամակ էր պատրաստել՝ մեկն ուղղված գեներալ Բուրնաշովին, մյուսը՝ Հերակլ թագավորին օգնության համար: Բայց և այնպես, կասկածում էր, որ ռուսներն օգնության կհասնեն, քանի որ մի քանի անգամ խոստացել էին սատարել հայերին, բայց չէին հասել:

Մելիք Մեջլումը զարգացած անձնավորություն էր: Նա Մոխրաթաղի իր ամրոցի օթևաններից մեկում մեծ գրադարան ուներ, ուր դարսված էին 5-րդ դարի հայ պատմիչների, միջնադարյան առանձին բանաստեղծների ժողովածուները, ռազմական արվեստի վերաբերյալ գրքերը, որոնք հաճույքով կարդացել էր: Նա, հետևելով հոր օրինակին, աշուղ ուներ, որը միայն հայերեն էր երգում: Նրան ամենից շատ մտահոգում էր այն դառն փաստը, որ Ղարաբաղում ընդհանուր թշնամու դեմ պայքարի միասնականություն չկար: Առանձին թևերի էին բաժանված մելիքները, երկպառակտված էր եկեղեցին: Ղարաբաղը երկու կաթողիկոս ուներ: Իսրայել կաթողիկոսը նստում էր Երիցմանկունք վանքում: Նա քարոզում էր խեղճություն ու հնազանդություն, տարբեր շրջաններում ուներ իր կալվածքները և տարված էր փառքի ու հարստության մոլուցքով: Մյուսը՝ Հովհաննես Հասան Ջալալյանը, Գանձասար վանքում էր: Նա մեծ հայրենասեր էր և ցանկանում էր վերականգնել Խամսայի ամբողջությունը: Հենց նրա նախաձեռնությամբ Ղարաբաղի և Զանգեզուրի մելիքները հաճախ հավաքվում էին, նամակներ հղելով Ռուսաստանի արքունիք: Գանձասարում մելիքները հավատարմության երդում տվեցին՝ համբուրելով Խաչն ու Ավետարանը: Նաև գրվեց աղերսագիր, որի տակ ստորագրեցին Հովհաննես կաթողիկոսը, վեց եպիսկոպոս և վեց մելիք: Ղարաբաղի Իբրահիմ խանին լրտեսության մեջ օգնեց Իսրայել կաթողիկոսը, որն ուզում էր ճանաչել Աղվանից կաթողիկոսին: Իսրայելին էլ օգնեց Հովհաննես կաթողիկոսի հարազատ եղբայրը՝ Ալլահ Ղուլի բեկը, որը մասնակցում էր Գանձասարում անցկացվող գաղտնի խորհրդակցություններին: Իրբրահիմ խանը դարձյալ խորհրդի պատրվակով իր մոտ հրավիրեց Հովհաննես կաթողիկոսին՝ իր հինգ եղբայրների հետ և բանտարկեց նրանց Շուշիի բերդում:

Պատմավեպում հերոսների կերպարների ստեղծման արժեքավոր գծերից մեկն այն է, որ Հակոբյանը մեծ ուշադրություն է դարձրել նրանց ներքին խռովահույզ վիճակները ներկայացնելուն: Հոգեկան խոր դրամա է ապրում Հովհաննես կաթողիկոսը բանտում, որը գեղարվեստական պահանջվող մակարդակով է ներկայացրել հեղինակը («Օձանման կոգին»): Նա գիտեր, որ Իբրահիմ խանն իրեն կպատժի, սակայն մտահոգված էր ազգի ճակատագրով: Զրույցի բռնվելով իր եղբոր՝ Սարգիս եպիսկոպոսի հետ՝ ասում է. «Առանց քրիստոնեական հավատի չենք կարող ազգի գոյությունը պահպանել: Բայց մեր անմիաբանությունը զրկեց մեզ իշխանությունից ու անկախությունից: Մելիք Շահնազարն ու իր դաշնակիցները մատնեցին մեզ, մեր սուրբ գործն ու իղձերը... Չէ՞ որ մենք ենք մեր հայրենի երկրի տերերը: Ամենքիս համար ավելի լավ չէ՞ր լինի մարտնչել այդ գոյապայքարում, թեկուզև պարտվել, սակայն երբեք չենթարկվել ապագա սերունդների նզովքին»[8]: Իբրահիմ խանն ի վերջո կաթողիկոսին թունավորում է բանտում: Հակոբյանը, հետևելով պատմական փաստերին, նույն ժամանակի հերոսներին գեղարվեստական կերպարանք է հաղորդել՝ երբեք չշեղվելով իրական ճշմարտությունից: Դա գրողի տեսանկյունն է: Հենց վեպի պատմականության խորությունն ամենից առաջ պայմանավորում է նրա գեղարվեստական մեծ արժեքը: Վեպում նույնքան համոզիչ է Իսրայել կաթողիկոսի՝ որպես դավաճանի կերպարը մի շարք գլուխներում:

Վեպի կենտրոնական կերպարներից է մելիք Զումշուդը: Նա մելիք Շահնազարի որդին էր, սակայն նման չէր ոչ հորը, ոչ եղբայրներին: Նա Ղարաբաղում մելիքների միասնության կողմնակիցն էր և ամեն կերպ մտածում էր Իբրահիմին տապալելու մասին: Մելիք Զումշուդն անհանգստացել էր, երբ մելիք Մեջլումից իմացավ, որ Բուրնաշովի հրամանով ռուսական զորքերը ետ կանչվեցին, իսկ մելիքները ետ վերադարձան: Փաստորեն ռուսների հետ երեք օր տևած արշավանքը դեպի Ղարաբաղ ձախողվեց: Ետդարձի ճանապարհին էլ խանի մարդկանց ձեռն ընկավ նրա քրոջ որդին՝ մելիք Ֆրիդոնը, որը մյուս գերիների հետ տարվեց Շուշվա բանտը: Նա մտածեց իր զարմիկին ազատելու մասին և առանց հոր համաձայնությունն ստանալու, գնաց Իբրահիմ խանի մոտ և որպես տուգանք մեծ գումար վճարեց՝ Ֆրիդոնին ազատելու համար: Մելիք Զումշուդը լավ էր հասկանում, թե ինչպես էին իր հարազատ հորը վերաբերվում իրենց մելիքությունում՝ Վարանդայում: Սակայն նա մի օր ժողովրդի վիճակի հետ ծանոթանալու համար մուրացկանի շորերով շրջեց Շուշիում, և հիասթափությունն ավելի խորացավ («Մելիք Զումշուդը մուրացկանի կերպարանքով»): Պարզվեց, որ հայրը նույնքան ատելի է մարդկանց, որքան Իբրահիմ խանը: Վեպում չափազանց հետաքրքիր է «Աստված և տալիս է, և տանում» գլուխը, որտեղ ներկայացված է մելիք Շահնազարի և որդու՝ մելիք Զումշուդի հանդիպումն ու առանձնազրույցը: Նա հորը հանդիմանում է թուրք խանի հետ բարեկամություն անելու համար և ցավ է զգում՝ տեսնելով, թե ինչպես են օրեցօր թուրքերով լցվում մանավանդ Վարանդայի շրջանի գյուղերն ու գավառները, ինչպես է խանը բանտարկում հայրենասեր մելիքներին, ինչպես է թունավորել բանտում Հովհաննես կաթողիկոսին: Եվ նրա զայրույթն այնքան է սաստկանում, որ ասում է. «Ասես ապրում ենք խավարի թագավորության մեջ... Ո՞վ պիտի մտածի ժողովրդի մասին, մարդկանց համար գոնե տարրական դպրոցներ բացի: Այնինչ նախկինում Ամարաս վանքին կից դպրոց կար, դու փակել տվեցիր: Ինչո՞ւ... Տգետներին հե՞շտ է դասավանդելը: Մեր գուսաններին ստիպում ենք, որ պարսկերեն և թուրքերեն երգեր երգեն: Հայ մարդկանց անուններն էլ պարսկերեն կամ թուրքերեն ծագում ունեն: Այդ ո՞ր թուրքը կամ պարսիկն է հայի անուն կրում: Ինչո՞ւ պետք է դարաբաղցին լինի այդքան օտարամոլ: Իմ անունը Զումշուդ է, եղբայրներինս՝ Զհանգիր, Զհանբախշ,

Հուսեին: Բայց ո՞վ պետք է կրի մեր հայկական անունները՝ Արա, Արամ, Առաքել, Գարեգին և այլն: Չէ՞ որ մենք քրիստոնյա ժողովուրդ ենք, և մեր լեզուն հայերենն է: Հայրի՛կ, մի՞թե չես տեսնում, թե ինչ ողորմելի է մեր վիճակը: Եթե չսիրենք մեր լեզուն և կրոնը, թշնամին կոչնչացնի մեզ քայլ առ քայլ»[9]:

Հոր և որդու երկխոսության լարվածությունը հայ գրականությունից մեզ հիշեցնում է Ռաֆֆու «Սամվել»-ում Սամվելի և հոր զրույցը: Սակայն եթե այնտեղ հերոսը դավաճանության համար սպանում է հորը, այստեղ Զումշուդը, սիրելով հորը, նրան միայն նախատում է, հորդորում, ըմբոստանում, զգաստանալու կոչ հնչեցնում: Մելիք Զումշուդի համար ծնողն ամենաբարձր արժեքն է, որը հավասար է հայրենիքին: Նա ինչպես ցավով է տանում հայրենիքի վիճակը, քանի որ օտար լծի տակ է, այնպես էլ դառնությամբ է ընդունում հոր արարքները. «Մարդը պարտավոր է արժանավայել ապրել, սիրել իր բնօրրանը, ժողովրդին, լեզուն, եկեղեցին: Չեմ կարող հանգիստ նստել ամրոցում ու տեսնել, թե ինչպես է կործանվում Ղարաբաղը: Սրտանց ցանկանում եմ քեզ պիտանի լինել որպես որդի, մեր տանջված ազգին՝ որպես զինվոր»[10],- ասում է նա: Ու հետաքրքիրն այն է, որ մելիք Շահնազարը որդու հետ ունեցած զրույցից հետո իսկապես վերանորոգում է Ամարաս վանքը: Դա ևս պատմական ճշմարտություն է: Մելիք Զումշուդն այն հայրենասեր մարդն էր, որը հետագայում օգնում է ռուսներին՝ որսալ ու տապալել Իբրահիմ խանին: Ցավոք, դա լինում է մի քիչ ուշ, 1806 թվականին:

Հայրենասեր մելիքների կերպարներից է մելիք Գրիգորը, որն իր հայրենասիրությունից բացի առանձնանում է մաքուր ու անկեղծ սիրով Աննայի հանդեպ, որը մելիք Մնացականի դուստրն էր: Ջերմ, գեղեցիկ ու պատկերավոր խոսքերով է նա իր սերը բացատրում ու սիրտը բացում. «Իմացիր, որ ուժեղ սերը միշտ տագնապի ու վախի մեջ է: Ինձ հավանաբար կյանքի հավերժությունն էլ չի հերիքի կարոտս քեզանից առնելու համար»,- շշնջում է նա Աննային նրանց այգում: Աննան հասկանում է, որ նա պիտի պատերազմին մասնակցի և ոգևորում է նրան. «Հայրս ասաց, որ Աղա Մահամմադ շահը պատրաստվում է հարձակվել Ղարաբաղի վրա: Դու ևս պետք է պաշտպանես մեր հայրենի հողը: Ակնածանքի արժանի չէ այն տղամարդը, որ խուսափում է կռիվներից: Ընդհակառակը, քո ազգասիրությամբ ավելի ես բարձրանում իմ աչքում»,- ասում է Աննան՝ խոստանալով սպասել սիրած տղամարդուն: Գրիգոր մելիքը մասնակցում է պատերազմին, վիրավորվում է ուսից և կրկին հանդիպում սիրելի էակին:

Ժաննա Հակոբյանը, ելնելով աստվածանվեր այն գաղափարից, որ առողջ ընտանիքի հիմքն անձնուրաց սերն է, վեպում բավականին տեղ է հատկացրել սիրո նկարագրությանը: Ընթերցում ես գրքի «Թաքուն սիրո տվայտանքները», «Պատիժ սիրո դիմաց», «Հավերժությունն էլ ինձ չի հերիքի», «Պատերազմները չնչին են սիրո կողքին», «Աղավնու հայտնության խորհուրդը» գլուխները և համոզվում, որ Ժաննան կարողացել է պատկերել սիրո աշխարհը գեղագիտական հունձքի մեջ:

Վեպում դրական կերպարների կողքին կան բացասական հերոսներ: Գրողն այդ պատմական հերոսներին չի հորինել, նրանց միս ու արյուն է տվել ու այնպես է կենդանացրել, որ ընթերցողն ատելությամբ է լցվում նման դավաճանների նկատմամբ (մելիք Շահնազար, Ալլահ-դուլի բեկ, Միսայիլ բեկ, Ռուստամ բեկ, Ապրես աղա և այլք): Այդ շարքում առանձնանում է մելիք Շահնազարը: Հակոբյանը, թափանցելով նրա հոգեբանության մեջ, բացում է նրա ներաշխարհը, խոհերը, հակասությունները: Նա մեծ աշխատանք է տարել մելիք Շահնազարի շրջապատը բնական դարձնելու համար: Մենք տեսնում ենք նրան ընտանիքում, Իբրահիմ խանի հետ նրա պալատում, տոնախմբություններին, Պոլը-Պուղու հետ՝ մտերմիկ մթնոլորտում: Այդ բացասական հերոսի կերտման առումով Հակոբյանը հետևել է հայ գրականության մեջ Դ. Դեմիրճյանի թո-

ղած ավանդին: Խոսքը Վասակ Սյունեցու կերպարի մասին է: Մելիք Շահնազարը որպես դավաճան նաև ունի իր դրական հատկանիշները, նա նույնպես հոգ է տանում ընտանիքի զավակների մասին՝ հարուստ կտակ թողնելով որդիներին: Սակայն նրա հավատարիմ բարեկամը Իբրահիմ խանն էր մնում, և նա դեմ էր հայրենանվեր մելիքների գործերին: Նա չէր էլ ուզում գիտակցել, որ ինքն էլ թշնամու հետ Ղարաբաղը կործանման էր տանում: Ազգային մտածելակերպը, ազգային վեհ գաղափարները նրա համար չէին: Շահնազարի կանանցից մեկն էլ Իբրահիմի քույրն էր: Նա հարյուրավոր գյուղեր, խոշոր կալվածքներ ու մեծ հարստություն ուներ: Եվ աչքերը փակում էր բռնակալ խանի առջև, երբ վերջինս նորանոր կալվածքներ ու հողեր էր նվաճում՝ իր ճանապարհին ոչնչացնելով հայերին:

Հոգեբանական նույն խորությամբ է ստեղծված Իբրահիմ խանի կերպարը: Նա հորից ավելի դաժան է, հայատյաց, խորամանկ, ուժեղ: Վեպում ցնցող է Շուշվա բանտապետի սպանության տեսարանը: Խանի հրամանով նրան նետում են քաղցած առյուծների վանդակն այն բանի համար, որ հայ մելիքներին հաջողվել էր բանտից փախչել: Բավականին կենդանի է պատկերված նրա ամրոցը, նիստուկացը, մարդկանց հետ ունեցած նրա վերաբերմունքը: Նրանից ավելի արյունարբու էր Աղա Մահամմադ խանը, որը հաճույք էր ստանում մարդկանց տանջանքների ենթարկելուց ու սպանելուց: Նրա դաժանությունից ընթերցողն ատելությամբ է լցվում, մանավանդ կարդալով «Աղա Մահամմադ խանի վրեժխնդրությունը» և «Թիֆլիսի ավերումը» գլուխները: Բոգդան Ձանյանը, երկրորդ անգամ անդրադառնալով վեպին, գրել է. «Դասական վեպին համարժեք կերպարներ են ստեղծված պատմավեպում: Խոսքս շահի և Իբրահիմ խանի արյունալի արարքների մասին է» [11]*: Բանաստեղծ, հրապարակախոս Հրաչյա Բեգլարյանը նկատել է.* «Այս գրքի մեծագույն առավելություններից մեկն այն է, որ պատմավեպի դրական և բացասական բոլոր հերոսներն այնպես են կերպարանավորվել, որ շատ տպավորիչ են ու տեսանելի: Հաճախ այնպես է թվում, թե կարդում ես ականատեսի հուշերը: Ինձ համար ուրախալի է ծանոթ շավիղներում նորություններ հայտնաբերելը»[12]:

Վեպում չկա այնպիսի կերպար, որին գրողը մի առժամանակ չմտաբերի: Բոլոր հերոսներն էլ նրա աչքի առաջ են՝ գործողությունների մեջ, և նրանց միջև կա ներքին կապ: Յուրաքանչյուրի մտահոգությունն էլ հայրենիքի վիճակն է: Հավատարիմ մնալով 18-րդ դարի անհանգիստ ու փոթորկալից էությանը՝ Ժ. Հակոբյանն իր հերոսներին ավելի շատ բնութագրում է պատերազմական գործողությունների մեջ: Վեպում պատկերված ռազմի տեսարանները խորապես կրում են ժամանակի ոգին: Հրաշալի են տրված հայտնի եկեղեցիների (Գանձասար, Ամարաս, Գտչավանք և այլն) նկարագրությունները և նրանց ստեղծման պատմությունը: Վեպում տեղին նկարագրվում են ժողովրդական կենցաղն ու սովորությունները, որոնք նպաստում են համոզիչ և առինքնող կոլորիտի ստեղծմանը, կոլորիտ, որը ներառում է հարսանիքների, կրոնական տոների, ժողովրդի նիստուկացի, ճաշակի, բնության հանդեպ ունեցած վերաբերմունքի երանգներ: Էական է նաև ղարաբաղյան բարբառի, ժողովրդական ասացվածքների, իմաստուն արտահայտությունների ճաշակով ու տեղին գործածությունը խոսքի մեջ: Իսկ ղարաբաղյան բարբառն օգտագործում է միայն Պըլը-Պուղին, որի կերպարը զարգանում է վեպի սկզբից մինչև վերջ: Վիպասանը չի ցանկացել գիրքը ծանրաբեռնել ղարաբաղյան բարբառով:

Վեպում մելիքների, խաների, հոգևոր առաջնորդների կողքին պատկերված են ժողովրդի մարդկանց կերպարները: Այդ կերպարներից է Լուսաբերը: Նա երկու զավակ ուներ. 14-ամյա դուստրը՝ Վարդիկը, գտնվում էր Իբրահիմ խանի հարեմում, իսկ որ-

դին՝ Առաքելը, քրոջ պատճառով բանտում էր: Ամուսինը՝ Մակիչը, վշտից կորցրել էր խոսելու ունակությունը: Նա պայտար էր, երբեմն էլ որս էր անում, որսի միսը վաճառում: Ապրում էր Քարին տակ գյուղում: Գրողն այնպիսի հմտությամբ է նկարագրում գյուղացու կենցաղը, տան պատկերը, որ մտովի տեղափոխվում ես 18-րդ դար: Երեսուն տարեկան էր Լուսաբերը: Ամուսնացել էր տասներեք տարեկանում: Հին ավանդույթի համաձայն՝ իր և Մակիչի ծնողներն էին որոշել իրենց ամուսնացնել: Վեպում խոր հոգեբանությամբ են պատկերված կնոջ ծանր ապրումները: Գրողը ցավով փաստում է, որ երբ կեսրայրը կենդանի էր, իրեն թույլ չէր տալիս բաց երեսով երևալ: Նրա ներկայությամբ աշխատում էին անաղմուկ քայլել: Նրա հետ մինչև մահ չխոսեց, որովհետև իրավունք չուներ: Եթե հարկ էր լինում տնեցիներից որևէ մեկին մի բան ասել, Լուսաբերն իր ասելիքը փոխանցում էր երեխաների միջոցով: Սկեսուրի հետ էլ չխոսեց մինչև երեխա ունենալը: Նա մյուս կանանց պես դատապարտված էր լռության ու համբերության:

Կանանց կերպարներից ուշագրավ է տասնվեցամյա Խաթունի կերպարը, որը վաղուց էր զրկվել ծնողներից և ապրում էր մենակ: Նրան հինգ տարեկանից ծնողները նշանել էին համագյուղացիներից մեկի՝ Պողոսի հետ, որը երեք տարի առաջ հոր հետ հեռացել էր Ղարաբաղից՝ հաց վաստակելու: Գյուղացիները մեկնում էին Շամշադին, Շամխոր, Ղազախ, Շամախի: Խաթունի քույրերն ու եղբայրներն էլ ամուսնացած էին: Նա տանը գորգ, ծիու չուլ, կարպետ էր գործում: Փոխադարձ սիրով աղջիկը կապվում է գյուղապետի տղայի՝ Իսահակի հետ, որն ամուսնացած էր: Նրանք թաքուն հանդիպում էին, և գյուղում ոչ ոք նրանց սիրո մասին ոչինչ չգիտեր: Իսահակը նրան տեսել էր, երբ եկել էր գորգ պատվիրելու: Գրողը նրանց սիրո պատկերմամբ ցույց է տվել այն ժամանակ գոյություն ունեցող դաժան սովորությունները, վերաբերմունքը սրտանց սիրահարվողի հանդեպ: Եվ նրանց կապը դառը հետևանքներ է ունենում: Ծնվում է նրանց սիրո պտուղը՝ երեխան: Այդ մասին արդեն իմանում են գյուղում: Եվ գավառապետը որոշում է Խաթունին պատժել: Նրան նստեցնում են էշի վրա, երեսը թրիք քսում ու պտտեցնում գյուղամիջում: Բավական հետաքրքիր է այն տեսարանը, երբ այդ դեպքից առաջ Խաթունը սիրած տղամարդուն պատժելու համար (որ չի ամուսնալուծվում, իրեն օրինական կին չի դարձնում) փակում է նրան հենց իր նկուղում:

Այսպիսով՝ պատմավեպում հեղինակը հաջողությամբ ներկայացրել է սիրո երկու պատմություն: Մեկը մելիք Գրիգորի և Աննայի սիրային կապն է, մյուսը՝ Խաթոունի և Իսահակի:

«Ղարաբաղի ճակատագիրը» վեպում գրողը մեծ տեղ է տվել մելիքների, զորավարների կերպարներին (Թյուլի Արզուման, Դալի Մահրասա (Ավագ վարդապետ) և զարգար Մելքում, Աբրահամ և այլք): Նրանց մեջ առանձնանում է Թյուլի Արզումանի կերպարը, որը մելիք Մեջլումի զորքի գլխավոր հրամանատարն էր: Թյուլի մականունը տվել էին թշնամիները, որը թարգմանաբար նշանակում էր՝ ավազակ: Նա Մեջլումի հոր՝ մելիք Հաթամի հոր՝ մելիք Իսրայելի հովվի որդին էր: Մանկության տարիներին ոչխարներ էր արածեցնում, իսկ հետո դարձավ մելիք Հաթամի քաջ զորավարներից մեկը: Մի անգամ նրան հանձնարարվեց Սարգիս եպիսկոպոսին իր եղբայրների հետ առանձին ճանապարհով ուղեկցել Գանձակ: Նրա խմբում քսանհինգ զինվոր էին, այդ թվում և՝ որդին: Սպասվում էր թշնամու հետ ուժեղ բախում: Իսկ երբ որդին անհանգիստ հարցնում է հորը, թե ինչպես պիտի դուրս գան ծուղակից, Արզումանը պատասխանում է. «Իմացի՛ր, որդի՛ս, ամենակարևորը՝ երբեք խուճապի չմատնվել: Տեսնո՞ւմ ես, ձախ ձեռքիս մատներ չկան: Դրա համար երկաթե ձեռնոց եմ հագնում: Սակայն մի ձեռքն էլ ինձ հերիք է կռվելու համար: Հայ զինվորն ընդունակ է անհավասար պայման-

ներում բերդեր գրավել»[13]: Բարեբախտաբար, թեժ մարտում Արզումանի ջոկատից միայն վիրավորներ եղան:

Ինչպես տեսնում ենք, վեպի սկզբից մինչև վերջ շոշափվում է «հայրեր և որդիներ» հարաբերությունը, որի հիմքում ընկած են ավանդաբար փոխանցվող ազգապահպան պատգամները (մելիք Հաթամ-Մեջլում-որդի Հաթամ, Հովսեփ մելիք-Աբով մելիք Ռոստամ-մելիք Բախտամ-մելիք Աբբաս, զորավար Թյուլի Արզուման-Աբրահամ և այլք):

Ժ.Հակոբյանը պատմության գնահատմանը մոտեցել է Խորենացու պատմագեղագիտական մեթոդով, իրադարձությունները գնահատել քննական մոտեցումով՝ ուշադրության կենտրոնում պահելով «հայրեր և որդիներ» հարաբերությունները: Գրողը ճշմարտացիորեն ցուցադրել է հայրենասիրության այն ոգին, որ փոխանցվել է հայրերից որդիներին, այստեղից էլ՝ օջախասիրության արցախյան ֆենոմենը:

Ժ. Հակոբյանի «Ղարաբաղի ճակատագիրը» երկը արդիական լուրջ հնչողություն ունի, որը կարելի է համարել նկատելի ներդրում հայ պատմավիպագրության հարուստ գանձարանում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հակոբյան Ժ., «Ղարաբաղի ճակատագիրը», Եր., 2007, էջ 3
2. «Փակագիծ», 3 հունիսի, 2007թ.
3. «Ազատ Արցախ», 31 հուլիսի, 2010թ.
4. «Մշակույթ», թիվ 1, 2007թ., էջ 16:
5. «Հայրենի եզերք», հոկտեմբեր, 2007:
6. Հակոբյան Ժ., «Ղարաբաղի ճակատագիրը», էջ 34:
7. Նույն տեղում, էջ 67:
8. Նույն տեղում, էջ 46:
9. Նույն տեղում, էջ 109:
10. Նույն տեղում, էջ 115:
11. «Հայրենի եզերք», հոկտեմբեր, 2007:
12. Բեգլարյան Հ., «Արցախ-Նամե», 2012, հ. 9, էջ 357:
13. Նույն տեղում, էջ 165:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Պատմավեպ Արցախի ճակատագրի մասին

Սոկրատ Խանյան

Սույն հոդվածում քննարկվում ու գնահատվում է տաղանդավոր բանաստեղծ և արձակագիր Ժաննա Հակոբյանի «Ղարաբաղի ճակատագիրը» պատմավեպը: Նշվում է, որ Ռաֆֆու «Դավիթ Բեկ» և Խանզադյանի «Մխիթար Սպարապետ» վեպերի շարքում Ժ. Հակոբյանի երկն աչքի է ընկնում նրանով, որ նա գեղարվեստական պահանջվող մակարդակով պատկերել է 18-րդ դարի վերջի երկու տասնամյակների պատմական իրադարձությունները: Գրողն ստեղծել է դրական և բացասական կերպարների մի պատկերասրահ՝ հաստատելով այն գաղափարը, որ թուրք հրոսակների դեմ մղվող պայքարում հայ ժողովրդի փրկությունը նրա հավաքական ուժի մեջ է:

Բանալի բառեր՝ *պատմավեպ, մելիքներ, Արցախի պատմությունը, բանաստեղծ, հայրենասիրական, թշնամի, հայ ժողովուրդ:*

РЕЗЮМЕ
Исторический роман о судьбе Арцаха
Сократ Ханян

В данной статье исследуется и оценивается исторический роман “Судьба Карабаха” талантливого поэта и прозаика Жанны Акопян. Подчеркивается, что, наряду с произведениями “Давид Бек” Раффи, “Мхитар Спарапет” Ханзадяна, работа Ж.Акопян выделяется тем, что должным образом отражает события последних десятилетий XVIII века. Автор создал систему положительных и отрицательных образов, подтверждая идею о том, что в борьбе против турецких нападок армянских народ находит спасение, только будучи единым.

Ключевые слова*: исторический роман, мелики, история Арцаха, поэт , патриотический, враг, армянский народ.*

SUMMARY
Historical novel on the fate of Artsakh
Socrat Khanyan

This article explores and evaluates the historical novel -"The fate of Karabakh" – by the talented poet and writer - Zhanna Hakobyan. It is emphasized that, along with such works as "David Beck" by Raffi "Mkhitar Sparapet" by Khanzadian the by work Zh.Akopyan is distinguished by the adequate representation of the events of the two last decades of the XVIII century. The author created a system of positive and negative images, confirming the idea that the in struggle against the Turkish attacks the Armenians win only being unified.

Keywords: *historical novel; meliks, the history of Artsakh, poet, patriotic, foes, the Armenian nation.*